Ապրիլի 6-ին՝ Սպորտի միջազգային օրվա կապակցությամբ Ազատության հրապարակում անց է կացվել բացօթյա մարզումներ և ցուցադրական ելույթներ մի շարք մարզաձևերից:

Ապրիլի 21-ին անցկացվեց «Սպորտլանդիա» մարզական միջոցառման երևանյան փուլը՝ Երևանի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև:

Համագործակցելով միջազգային ֆեդերացիաների հետ՝ ապրիլից-հունիս ամիսներին անց է կացվել «Երևանի քաղաքապետի գավաթ» միջազգային մրցաշարերը՝ ձյուդո, վոլեյբոլ մարզաձևերից:

Ապրիլի 30-ից մայիսի 5-ը, «Գազպրոմ Արմենիա» ուսումնամարզական համալիրի մարզադահլիճում անցկացվեց «Երևանի քաղաքապետի գավաթ» վոլեյբոլի մրցաշարը, որին մասնակցեց 5 երկրի շուրջ 75 մարզիկ: 3-րդ հորիզոնականը գրաված թիմը պարգևատրվեց 1 մլն ՀՀ դրամով, 2-րդ հորիզոնականը գրաված թիմը՝ 2 մլն ՀՀ դրամով, իսկ առաջին հորիզոնականը գրաված՝ 3 մլն ՀՀ դրամով:

Մայիսի 10-ին «Արմ մարաթոն» մարզակրթական հիմնադրամի հետ համատեղ անց է կացվել «Yerevan Spring Run 2026» վազքի մարաթոնը 1, 5, 10, 4*2,5 կմ մրցատարածություններով, որին մասնակցել է շուրջ 800 վազորդ:

Մայիսի 22-25-ը Երևանի հեծանվահրապարակում անց է կացվել «Հեծանվասպորտի Երևանի բաց առաջնություն» միջազգային մրցաշարը, որին մասնակցել է շուրջ 60 մարզիկ՝ 8 մրցաձևերում:

Մայիսի 28-ից հունիսի 2-ը Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցում, Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի հետ համատեղ անց է կացվել մարմնամարզության «YEREVAN OPEN» միջազգային մրցաշարը, որին մասնակցել է 5 երկրի շուրջ 40 մարմնամարզիկ:

Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված, Մանկական զբոսայգում կազմակերպվել է մարզամշակութային միջոցառում, որին մասնակցեցին Երևանի 12 վարչական շրջանի նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիմերը:

Հունիսի 7-8-ը Երևանի «Դինամո» մարզադաշտում անց է կացվել «Երևանի քաղաքապետի գավաթ» ձյուդոյի միջազգային մրցաշարը, որին մասնակցեց շուրջ 240 մարզիկ:

Հունիսի 13-19-ն անց է կացվել Երևանի ջրագնդակի միջազգային բաց առաջնություն՝ նվիրված Հենրիկ Հակոբյանի հիշատակին:

Հունիսի 15-17-ը ԱՄՆ պետքարտուղարության կրթական ու մշակութային գործերի բյուրոյի «Մարզական բանագնացներ» ծրագրով ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանության նախաձեռնությամբ Հայաստան էին այցելել Պարալիմպիական խաղերի և աշխարհի առաջնության չեմպիոններ, ԱՄՆ մարզական բանագնացներ, անվասայլակով բասկետբոլիստներ՝ Ռոզ Հոլերմանն ու Սթիվ Սերիոն: Վերջիններիս մասնակցությամբ

հունիսի 17-ին Ազատության հրապարակում կազմակերպվել է անվասայլակով բասկետբոլի ցուցադրական խաղ և վարպետության դաս՝ Հայաստանի անվասայլակով բասկետբոլի ֆեդերացիայի, «Այբ» դպրոցի, Շիրակի պետական համալսարանի և Շենգավիթի մանկապատանեկան մարզադպրոցի սաների համար:

Հունիսի 28-ին Երևանում անց է կացվել «PREPA Run» վազքի փառատոնը, որին մասնակցել է շուրջ 1400 վազորդ:

Հունիսի 30-ից հուլիսի 1-ը Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի հետ համատեղ անց է կացվել աշխարհի, Եվրոպայի բազմակի չեմպիոն Բենուր Փաշայանի անվան հունահռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային հուշամրցաշարը, որին մասնակցել է 16 երկրից ժամանած 300-ից ավելի ըմբիշներ: Այս մրցաշարն արժանացել է Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի բարձր գնահատականին և ընդգրկված է ֆեդերացիայի օրացուցային պլանում: